Արգավանդի համայնքի 2017թվականի տարեկան հաշվետվություն

2017թ. հունվարի 19-ին ժամը 11:00 –ին Արգավանդի մշակույթի տանը կայացավ համայնքի ընդհանուր ժողով. Մասնակցությամբ մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Թովմասյանի և համայնքի 120 անդամների

Նախագահությամբ՝ Ա.Աղաջանյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Սարգսյանի

Օրակարգում

2017թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն :

Զեկուցող՝ Ա.Աղաջանյան

Զեկուցողը նշեց որ 2017թվականի սկզբին ֆինանսական պարտքեր են եղել՝ աշխատավարձի պարտք 2218800 ՀՀ դրամ, եկամտային պարտք՝ 68000 ՀՀ դրամ, ՏՀԶՎԿ ծրագրին՝ 50000 ՀՀ դրամ, Գազպրոմ՝ 68000 ՀՀ դրամ ,Դիզվառելանյութ՝ 66000 ՀՀ դրամ որոնք մարվել են 2017թվականի ընթացքում:

2017 թվականի ընթացքում համայնքում կառուցվել են նոր ջրագծեր,վերանորոգվել են գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները ,համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն , համայնքապետարանին կից այգում տեղադրվել են նստարաններ և տնկվել ծաղիկներ: 2017 թվականի ընթացքում տեղադրվել է հենասյուներ ներկայում չգործող նախկին խորքային 3 հորերը վերանորոգվել և մաքրվել են , կատարվել են շինարարական աշխատանքներ, տեղադրվել են պոմպեր, կատարվում է շաբաթական 2 օր աղբաթափություն ,ամբողջովին վերանորոգվել է վերջին 30 տարում չգործող մշակույթի տան 2-րդ հարկի ամառային դահլիճը ,որը նախատեսված է մանուկների սպորտային պարապմունքների համար : 2017 թվականի կեսերից սկսվել է համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները:

Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 17 սոցիալապես անապահով , 27 զինծառայողների ,20 նորածին երեխաների և 9 մահացածների ընտանիքներին:

Ելույթ ունեցան համայնոի բնակիչներ Մ. Կարապետյանը.Կ.Դանիելյամը.Ն.Մաթևոսյանը. Յու.Հակոբյանը նրանք գնահատեցին 2017թվականի համայնքապետարանի աշխատանքները բավարար:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱՋԱՆՅԱՆ